ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
հրավերի պարզաբանման մասին

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի
2024 թվականի հունվարի 18-ի թիվ 2 որոշմամբ և հրապարակվում է
“Գնումների մասին” ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն

Ընթացակարգի ծածկագիրը «ԵՊՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/184»

«Երևանի պետական համալսարան» Հիմնադրամի Գրադարանի կարիքների համար տպագրական ապրանքների և մարտկոցների ձեռքբերման նպատակով կազմակերպված ԵՊՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/184 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է հրավերի վերաբերյալ 05.09.2024թ. ստացված հարցադրումը և դրա վերաբերյալ 05.09.2024թ. տրամադրված պարզաբանումը՝

Հարցադրում N 2 (05.09.2024թ.) «Բարև Ձեզ, տվյալ դեպքում հարցը վերաբերվում է ոչ թե համարժեքության գնահատմանը՝ այսինքն, մենք ոչ թե հարցնում ենք օրինակ՝ գնահատեք TOTAL ֆիրմայի մարտկոցը համարժեք է, թե ոչ Duracel-ին, այլ հստակ ասում ենք, որ TOTAL ֆիրմայի մարտկոցների տեխնիկական բնութագրերը համապատասխանում են հրավերի պահանջներով սահմանված մարտկոցների տեխնիկական բնութագրերին, հետևաբար Ձեր կողմից բերված հիմնավորումը չի վերաբերվում տվյալ դեպքին, ինչով պայմանավորված ևս մեկ անգամ խնդրում ենք հրավերում փոփոխություն կատարել, քանի որ հակառակ դեպքում սահմանափակում է մեր մասնակցությունը, ինչը հակասում է Գնումների մասին ՀՀ օրենքի 13-րդ հոդվածին:»:

Պարզաբանում N 2 (05.09.2024թ.) «Հարգելի՛ գործընկեր, տեղեկացնում ենք Ձեզ, որ գնման առարկաների տեխնիկական բնութագրերին վերաբերող կարգավորումները չեն սահմանափակվում միայն «Գնումների մասին» օրենքի 13-րդ հոդվածի դրույթներով: Խնդրում ենք ուշադրություն դարձնել նաև ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 22-րդ կետին, որի համաձայն «գնման առարկայի բնութագրերը սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ՝ բացառությամբ սույն կարգի 23-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված հիմքով և նույն կարգի 21-րդ կետի 1-ին ենթակետի «դ» պարբերությամբ նախատեսված՝ պատվիրատուի ղեկավարի հետ համաձայնեցված դեպքերում կատարվող գնումների: Ապրանքների գնման դեպքում հղումներ օգտագործելիս ներկայացվում են որպես համարժեք առաջարկվող ապրանքների ֆիրմային անվանումը, մոդելը և արտադրողը»: Այս դեպքում գնման առարկայի տեխնիկական բնութագրում նշվել են գնման առարկաների մեկից ավելի հղումներ, որոնք պատվիրատուի կարիքը բավարարելու նպատակով կարող են առաջարկվել: Նշված պրակտիկան պատվրատուների կողմից ներկայումս լայնորեն կիրառվում է: Նմանատիպ հարցերի դեպքում խնդրում ենք դիմել պետական ֆինանսների կառավարման բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության քաղաքականությունը մշակող և իրականացնող գործադիր իշխանության պետական մարմին՝ ՀՀ ֆինանսների նախարարությանը»:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել «ԵՊՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/184» ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղար Լ. Այվազյանին:

Հեռախոս՝ 060 710 009:
Էլեկտրանային փոստ՝ gnumner@ysu.am: